

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ԱՍԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՅԱՅՏԱԳՐԻՆ

Շաբաթ, Նոյեմբեր 1-ին, երեկոյեան ժամը 6.00-ին, Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրութեան հազիւ վերադարձած Հայաստանէն, մասնակցեցաւ Ամերիկայի Հայկական Համագումարի փարեկան ընդունելութեան եւ յայտագրին՝ Փալմ Սփրինկզի Մըրիէթ պանդոկին մէջ: Արժ. Տ. Մուշեղ քինյ. Թաշճեան սեղաւնի օրհնութիւնը կատարեց:

Այս ձեռնարկին ներկայ էին շուրջ 500 անձեր, ամերիկացի յայտնի դէմքեր, հիւրեր:

Ելոյթ ունեցան Տիար Հրայր Յովնանեան, «Արարար» ֆիլմի յայտնի դերասանուհի Արսինէ Խանճեան, ճանչցուած ամերիկահայ գրող, «Այրող Տիգրիս»-ը գրքի հեղինակ Փիթըր Պալաքեան եւ ուրիշներ:

Ձեռնարկին պատուոյ հիւր՝ Ղարաբաղի Վսեմաշուք նախագահ Տիար Արկաղի Ղուկասեան կոչ ուղղեց ներկաներուն, յառաջիկայ Գոհաբանութեան օրուան թելեթոնին, Նոյեմբեր 27-ին օժանդակելու Արցախի Հարաւ-Հիւսիս ճանապարհի շինութիւնը աւարտելու աշխատանքին:

Առաջնորդ Սրբազան Հայրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ իր անուով ողջունեց նախագահ Ղուկասեանը, Տէր եւ Տիկին Հրայր Յովնանեանները, Ժողով Ընդ Սթայները, ներկաները, շնորհաւորեց պատասխանատուները եւ ըսաւ.

«Այսու մեծ գոհունակութեամբ կ'ողջունեմ Ձեզ յանուն մեր սիրելի Վեհափառին՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ ձեզ կը յղէ բարեմաղթութիւնները, Աւրուածահաճոյ ձեր առաքելութեան եւ Հայրենիքի եւ Ամերիկայի ձեր բերած վերածաղկումի ներդրումին:

Հայկական Համագումարը ամենաներշնչող կազմակերպութիւններէն մէկն է՝ Ամերիկահայ համայնքին, երկրի ամբողջ տարածքին, որ մարդկային ծառայութեան լաւագոյնին ձգտելու տեսլականով ներգրաւուած է երիտասարդութիւնը, ընդհանրապէս ամէն մակարդակի եւ յարկապէս քաղաքական գերանի վրայ:

Այս երեկոյի հաւարը կը նորոգէ մեր հոգիները եւ կը հրաւիրէ մեզ որպէս քաղաքացիներ Ամերիկայի առաւել չափով մեր նպաստը բերելու եւ իրագործելու նաեւ հայերուս երազանքը: Հրաւեր մըն է այս բոլորիս ուղղուած Ամերիկահայ կեանքի մէջ Համագումարի հիմները առաւել եւս ամրացնելու՝ որպէս մեզ առաջնորդող կազմակերպութիւն:

Հայկական Համագումարը խոր համոզումով ներշնչած է մեզ բոլորս թէ՛ Ամերիկեան բարեբերու եւ սովորութիւններու հետ մեր միաձուլումը ոչ միայն անհրաժեշտութիւն է, այլ նաեւ մեր բարոյական պարտաւորութիւնն է այդ, նուիրուելու եւ ներդնելու մեր բաժինը երկրի մը, որուն օրհնութիւնը եւ բարիքը կը վայելենք մենք՝ որպէս հայ քրիստոնեաներ մեր ինքնութիւնը պահպանելով»: